ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵԱՍՄ-ԳՀՇՁԲ-22/3-1

ք. Երևան «03» 02. 2022թ.

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և «Կերխեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Էլեկտրական սարքերի վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճորակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ նպաստանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատունձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարինեն դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների՝ կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվումեն բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 **Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է**

մաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ	«Կերխեր» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 88/1	Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն	« Ամերիաբանկ ՓԲԸ »
Հ/Հ 900012000700	ՀՎՀՀ 00485116
ՀՎՀՀ 02697772	Հ/Հ 1570054651800100
	info@am.kaercher.com
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
« 03 » 02 2022թ. կնքված
ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-22/3-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50111260/501	Էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություն. «Կերխեր» HD 9/20-4 Classic սարքի սպասարկման մասնագետի մատուցում «Կերխեր» HD 9/20-4 Classic սարքի սպասարկման մասնագետը պարտավորվում է՝ 1. Ամսեկան 3 անգամ այցելել հաճախորդին, իրականացնել սարքի տեխնիկական վիճակի ստուգում, 2. Կատարել պոմպի, շարժիչի, էլեկտրական բլոկի գործարկման խնդիրների դիագնոստիկա, խնդիրների առկայության դեպքում շտկել դրանք, 3. Կատարել ընդհանուր դիագնոստիկա, իրականացնել խորհրդատվություն փոխարինման ենթակա մասերի վերաբերյալ: 4. Վթարային սպասարկում, ըստ պատվիրատուի կանչի ախշատանքային ժամերին և օրերին: 3. Դիագնոստիկայի արդյունքում անհրաժեշտ պահեստամասերի փոխարինում նոր գործարանային պահեստամասերով:	դրամ	2000000	1	Ծառայությունները իրականացվելու են Երևան քաղաքի տարածքում	Պայմանագիրը ուժի մեջ կմտնի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ:

* *Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

** ***Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված օրվանից սկսած:***

Ծառայությունները ըստ կից Ցանկի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն
Հ/Հ 900012000700
ՀՎՀՀ 02697772

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Կերխեր» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41
« Ամերիաբանկ ՓԲԸ »
ՀՎՀՀ 00485116
Հ/Հ 1570054651800100
info@am.kaercher.com

/ստորագրություն/
Կ.Տ

Ցանկ

Չափաբաժին 1

N	Ապրանքի(ծառայության) անվանում	Չափի միավոր	Քանակ	Միավորի գին
1	2.880-990.0 KARCHER Օդակների հավաքածու 5 հատ	Հատ	1	1930
2	2.883-894.0 KARCHER Հզոր խողովակաձայր 25047	Հատ	1	8600
3	4.403-002.0 KARCHER Կցորդիչ	Հատ	1	4850
4	4.515-347.0 KARCHER Ծածկերի հավաքածու փոխարինման համար	Հատ	1	5100
5	4.730-059.0 KARCHER Ջրի ֆիլտր	Հատ	1	6000
6	4.730-168.3 KARCHER Ջրի ֆիլտր	Հատ	1	6900
7	5.034-494.0 KARCHER Բռնակ	Հատ	1	400
8	5.310-062.0 KARCHER Մանեկ	Հատ	1	1000
9	5.310-076.0 KARCHER Պնդօղակ	Հատ	1	1000
10	5.443-291.0 KARCHER Ռետինե խողովակի նիպպել/ոտիկ	Հատ	1	800
11	5.802-261.0 KARCHER Մոնտաժային դետալ	Հատ	1	850
12	6.362-078.0 KARCHER Կլոր կտրվածքով օղակ 13,3 x 2,4	Հատ	1	400
13	6.362-161.0 KARCHER Կլոր կտրվածքով օղակ 19,3 x 2,4	Հատ	1	400
14	6.363-328.0 KARCHER Կլոր կտրվածքով օղակ 23.16x5.33	Հատ	1	500
15	6.365-334.0 KARCHER Փորվածքով օղակ 18X26X6/8	Հատ	1	1450
16	6.401-412.0 KARCHER Պտտվող կցորդիչ	Հատ	1	16100
17	6.414-913.0 KARCHER Փրփրացնող խողովակաձայրի ֆիլտր՝միայն փոխարինման համար	Հատ	1	4250
18	6.435-662.0 KARCHER Անիվ D200	Հատ	1	2800
19	6.631-190.0 KARCHER Ցարժիչը պաշտպանող անջատիչ	Հատ	1	21000
20	6.632-414.3 KARCHER Կոնտակտոր LC1-D18V7SC090	Հատ	1	28650
21	6.641-270.0 KARCHER Խցան	Հատ	1	900
22	6.648-416.0 KARCHER Պտուտակ սև M20	Հատ	1	800
23	7.303-046.0 KARCHER Պտուտակ M6x12 -St-R3R (In6Rd)	Հատ	1	300
24	7.303-084.0 KARCHER Պտուտակ 4x25 -10.9-R2R (K-In6Rd)	Հատ	1	300
25	7.303-106.0 KARCHER Պտուտակ 4x12 -10.9-R2R (IN6RD)	Հատ	1	300
26	7.303-186.0 KARCHER Պտուտակ կիսագաղտնի գլխիկով M8x40 -St-A	Հատ	1	300
27	7.304-397.0 KARCHER Վեցանկյուն պտուտակ M8x20-8.8-A2E ISO 4	Հատ	1	300
28	7.304-419.0 KARCHER Վեցանկյուն պտուտակ M10x35-8.8-A3E	Հատ	1	300

29	7.306-020.0 KARCHER Պտուտակ գլանաձև գլխիկով M 6x16-8.8-A2E DIN	Հատ	1	300
30	7.306-047.0 KARCHER Պտուտակ գլանաձև գլխիկով M8x60-8.8	Հատ	1	300
31	7.311-511.0 KARCHER Վեցանկյուն պնդօղակ M10-8-A2E ISO 7040	Հատ	1	300
32	7.311-620.0 KARCHER Պտուտակ M8 -A2	Հատ	1	400
33	7.312-004.0 KARCHER Տափօղակ 8-200HV-A3E ISO 7089	Հատ	1	300
34	7.312-285.0 KARCHER Տափօղակ 10-200HV-A2E ISO7093-1	Հատ	1	300
35	7.318-039.0 KARCHER Զուգահեռ բանալին 8x7x36-C45K DIN 6885	Հատ	1	300
36	7.343-008.0 KARCHER Փականային օղակ 25x1,2-St-vz DIN 471	Հատ	1	300
37	7.401-353.0 KARCHER Գնդիկավոր առանցքակալ NUP 305-Waelz.St. DIN 541	Հատ	1	39900
38	9.751-004.0 KARCHER Պոմպային ագրեգատ փոխարինման համար	Հատ	1	2150
39	9.751-007.0 KARCHER Բռնակ HD 6\15	Հատ	1	14300
40	9.751-008.0 KARCHER Միացնող սյուն	Հատ	1	5700
41	9.751-023.0 KARCHER Շրջանակ	Հատ	1	54400
42	9.751-027.0 KARCHER Մխոց	Հատ	1	1200
43	9.751-028.0 KARCHER Փականի թամբ	Հատ	1	1300
44	9.751-030.0 KARCHER Ճնշման անջատիչ՝ հավաքված, միայն փոխարինման համար	Հատ	1	7000
45	9.751-044.0 KARCHER Ճիթային խողովակ փոխարինման համար 850 մմ	Հատ	1	21000
46	9.751-050.0 KARCHER Ռետինե խողովակ DN6, 20մ	Հատ	1	53500
47	9.751-064.0 KARCHER Անջատիչ՝ ամբողջական *CN	Հատ	1	8700
48	9.751-078.0 KARCHER Պոմպերի հավաքածու միայն փոխարինման համար HD 9/20	Հատ	1	159500
49	9.751-081.0 KARCHER Մխոցային գլանի գլխիկի ճնշման անջատիչ, միայն փոխարինման համար	Հատ	1	190150
50	9.751-082.0 KARCHER Շարժիչ 5,5 կՎտ	Հատ	1	449650
51	9.751-084.0 KARCHER Լարման սահմանափակիչ	Հատ	1	16400
52	9.751-085.0 KARCHER Մխոցի գլխիկի ճնշման անջատիչ	Հատ	1	149000
53	9.751-087.0 KARCHER Ռետինե խողովակ DN8 10մ	Հատ	1	34500
54	9.751-088.0 KARCHER Ռետինե խողովակ DN8 20մ	Հատ	1	67150
55	9.751-139.0 KARCHER Ցողացիր	Կոմպլեկտ	1	25500
56	9.751-140.0 KARCHER Ճիթային խողովակ փոխարինման համար 600 մմ	Կոմպլեկտ	1	17250
57	9.751-141.0 KARCHER Պողպատե խողովակների հավաքածու պահեստային մասեր	Կոմպլեկտ	1	500
58	9.760-107.0 KARCHER Զգող օղակ 16 x 2 - NBR 80 (9	Հատ	1	400
59	9.761-004.0 KARCHER Զգող օղակ 17.13 x 2.62	Հատ	1	400
60	9.761-007.0 KARCHER Խցան G 3/8"	Հատ	1	500

61	9.761-007.0 KARCHER Զգող օղակ	Հատ	1	500
62	9.761-019.0 KARCHER Միացնող դետալ	Հատ	1	1100
63	9.761-022.0 KARCHER Ցուղի մակարդակի չափիչ G 3/8"	Հատ	1	3150
64	9.761-037.0 KARCHER Պտուտակ 6.0x20-ST-A2R	Հատ	1	400
65	9.761-044.0 KARCHER Խցուկ 6.343-168.0	Հատ	1	400
66	9.761-052.0 KARCHER Պտտվող խցան	Հատ	1	3300
67	9.761-056.0 KARCHER Տափօղակ D 18 x 28	Հատ	1	1200
68	9.761-057.0 KARCHER Խցան G 3/8"	Հատ	1	1600
69	9.761-057.0 KARCHER Ջրահեռացման խցան G 3/8"	Հատ	1	1600
70	9.761-064.0 KARCHER Ճնշումային զսպանակ	Հատ	1	400
71	9.761-067.0 KARCHER Խցան G 1/2"	Հատ	1	2550
72	9.761-071.0 KARCHER Ականոց D 18	Հատ	1	4400
73	9.761-073.0 KARCHER Պլաստայի ծածկ	Հատ	1	500
74	9.761-075.0 KARCHER Փականի թամբ D 18x26	Հատ	1	1500
75	9.761-077.0 KARCHER Շտիֆտ	Հատ	1	900
76	9.761-078.0 KARCHER Լվացող մեքենա D 9.3 x 24	Հատ	1	400
77	9.761-081.0 KARCHER Զգող օղակ D 2.62x107	Հատ	1	1800
78	9.761-086.0 KARCHER Մալուխի սեղմիչ	Հատ	1	600
79	9.761-093.0 KARCHER Ցուղի մակարդակի ցուցիչ G3/4"	Հատ	1	2200
80	9.761-099.0 KARCHER Զգող օղակ 12.42x1.78	Հատ	1	300
81	9.761-104.0 KARCHER Զգող օղակ D 15.54x2.62	Հատ	1	400
82	9.761-105.0 KARCHER Օղակ G 1/2"	Հատ	1	500
83	9.761-106.0 KARCHER HD ձգիչ D 18	Հատ	1	9350
84	9.761-107.0 KARCHER Զգող օղակ 28.30 x 1.78	Հատ	1	600
85	9.761-108.0 KARCHER ND Սեղմիչ D 18	Հատ	1	9860
86	9.761-109.0 KARCHER Ներքևի մասի պահոց	Հատ	1	6300
87	9.761-117.0 KARCHER Ռետինե խողովակի հենակ	Հատ	1	3600
88	9.761-118.0 KARCHER Առանցքակալի ծածկ	Հատ	1	700
89	9.761-120.0 KARCHER Կափարիչ	Հատ	1	4800
90	9.761-135.0 KARCHER Շտիֆտ	Հատ	1	600
91	9.761-137.0 KARCHER Միացնող օղակ W 42x55x8	Հատ	1	2300
92	9.761-138.0 KARCHER Ասեղի կրիչ	Հատ	1	11000
93	9.761-140.0 KARCHER Կցեզր	Հատ	1	13600
94	9.761-154.0 KARCHER Անջատիչ	Հատ	1	3000

95	9.761-161.0 KARCHER Բաշխիչ տուփ կաթարիչ	Հատ	1	3850
96	9.761-174.0 KARCHER Հարթ գլխիկով պտուտակ	Հատ	1	600
97	9.761-177.0 KARCHER Ձգող օղակ	Հատ	1	400
98	9.761-180.0 KARCHER Հաստացնող օղակ D 55.56x3.55	Հատ	1	950
99	9.761-186.0 KARCHER 30° խողովակի կցորդ-միացուցիչ	Հատ	1	600
100	9.761-207.0 KARCHER Փականային տափօղակ	Հատ	1	300
101	9.761-213.0 KARCHER Սեղմիչ	Հատ	1	700
102	9.761-216.0 KARCHER Աստղաձև բռնակ	Հատ	1	1800
103	9.761-237.0 KARCHER Պտտվող բռնակ	Հատ	1	1500
104	9.761-242.0 KARCHER Ձգող պարան՝ ծակոտկեն ռետինից	Հատ	1	950
105	9.761-278.0 KARCHER Կորպուս	Հատ	1	30600
106	9.761-279.0 KARCHER Ճարժաթև	Հատ	1	4700
107	9.761-304.0 KARCHER Միացնող մալուխ շարժիչի համար 4 x 1,5 qm	Հատ	1	3700
108	9.761-305.0 KARCHER Մալուխ խրոցով	Հատ	1	29750
109	9.761-319.0 KARCHER Կափույրի վեցանկյունաձև պտուտակ M24x1.5	Հատ	1	3230
110	9.761-328.0 KARCHER Աղապտոր	Հատ	1	700
111	9.761-432.0 KARCHER Խցան D16	Հատ	1	400
112	9.763-272.0 KARCHER Անիվ D180	Հատ	1	4850
113	9.763-331.0 KARCHER Անիվի ծածկ D 180 cap	Հատ	1	300
114	9.790-008.0 KARCHER Պլանային սպասարկում, դիագնոստիկա, աշխատանք, ամիսը 3 անգամ	Հատ	1	40000
115	9.790-009.0 KARCHER Վթարային սպասարկում, ըստ կանչի ախշատանքային ժամերին և օրերին	Հատ	1	20000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն
հ/հ 900012000700
ՀՎՀՀ 02697772

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Կերխեր» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41
« Ամերիաբանկ ՓԲԸ »
ՀՎՀՀ 00485116
հ/հ 1570054651800100
info@am.kaercher.com

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«03» 02 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողականկարգով: ***Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

** *հրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն
Հ/Հ 900012000700
ՀՎՀՀ 02697772

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Կերխեր» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41
« Ամերիաբանկ ՓԲԸ »
ՀՎՀՀ 00485116
Հ/Հ 1570054651800100
info@am.kaercher.com

/ստորագրություն/
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

03.02.2022թ. կնքված «ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-22/3-1» ծածկագրով ծառայությունների գնման պայմանագրի

ք. Երևան «10» 02 2022թ.

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կերխեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողը պարտավորվում է սույն համաձայնագրի N1 հավելվածով՝ Վճարման ժամանակացույցով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում Պատվիրատուին մատուցել նախատեսված **էլեկտրական սարքերի վերանորոգման** ծառայությունները (այսուհետ՝ ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ծառայությունը և վճարել դրա համար:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում համայնքային հիմնարկ	**«Կերխեր» ՍՊԸ**
ք. Երևան, Շիրակի 88/1	**Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41**
ՀՀ ՖՆ գործառն.վարչություն	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900012000700	**ՀՎՀՀ 00485116**
ՀՎՀՀ 02697772	**Հ/Հ 1570054651800100**
	info@am.kaercher.com
Ա. Գրիգորյան _____	Ա. Բաղդասարյան _____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«03» փետրվար 2022թ. կնքված
ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-22/3-1 ծածկագրով պայմանագրի
«10» 02 2022թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111260/501	Էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություններ	-	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	**2000000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում համայնքային հիմնարկ
ք. Երևան, Շիրակի 88/1
ՀՀ ՖՆ գործառն.վարչություն
Հ/Հ 900012000700
ՀՎՀՀ 02697772

Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Կերխեր» ՍՊԸ
Ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 76, շին. 41
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00485116
Հ/Հ 1570054651800100
info@am.kaercher.com

Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ